



Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 58

ք. Երևան

08.06.2020թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 34/14-5/6721-20, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/2685-2020, ՀՀ էկոնոմիկայի 03/3287-2020 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.2/3239-2020 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/1726-2020 գրություններով ներկայացրած դրական կարծիքները, ինչպես նաև Վարչապետի 04.06.2020թ. թիվ 02/12.10/27083-2020 հանձնարարականը՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Բռնակոթ** բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.03 հա (կադաստրային ծածկագիր՝ 09-023-0208-0001-ից) արտավայր փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ «գյուղատնտեսական արտադրական հողեր» գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝  Վ. Տերտերյան


քարտուղար՝  Մ. Մկրտչյան

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՆԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱՏԵՇՏՈՒԹՅԱՆ

ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշման դրույթներով կազմված հողաշինարարական գործի նյութերով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Բոնակոթ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.03հա մակերեսով հողամասի վրա հիմնել սպանդանոց: Սպանդանոցի կառուցման միջոցով կլուծվեն մի շարք հարցեր, որոնք առկա են բակային մորթի պարագայում: Մասնավորապես՝ բակային մորթի դեպքում հիմնականում բացակայում են անասնաբուժասանիտարական հսկողությունը և համապատասխան հիգիենիկ պայմանների առկայությունը, ինչի արդյունքում մեծանում են վտանգները շրջակա միջավայրում տարբեր վարակիչ հիվանդությունների հարուցիչների տարածման, ինչպես նաև մսեղիքի, ենթամասմթերքների և կենդանական ծագման հումքի միջոցով մարդկանց և կենդանիների շրջանում հիվանդությունների տարածման տեսանկյունից, ինչպես նաև բակային մորթի արդյունքում ստեղծվում են տնտեսական վնասներ կապված այն հանգամանքի հետ, որ տեղի է ունենում մեծաքանակ ենթամասմթերքների և հումքի կորուստ (արյուն, կճղակներ, ոսկրային հյուսվածքներ, որոշակի ներքին օրգաններ ու գեղձեր և այլն), որոնք ճիշտ հավաքելու դեպքում կարող են հետագայում վերամշակվել և օգտագործվել տարբեր նպատակներով: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպանդանոցի կառուցման արդյունքում նաև հնարավորություն կստեղծվի համայնքում զարգացնել անասնապահությունը, ինչպես նաև ծրագրի ամբողջական իրականացման համար կկատարվեն մոտ 35մլն դրամի կապիտալ ներդրումներ և կստեղծվեն թվով 5 հիմնական աշխատատեղեր, ուստի սպանդանոցի կառուցման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի Բոնակոթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերից 0.03հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական հողեր գործառնական նշանակությամբ:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝


 Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
07.07.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՆԱԿՈԹ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱՏԵՇՏՈՒԹՅԱՆ

Սիսիանի համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝

 Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
07.07.2020թ.

